ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

<<11>> հունիսի 2019 թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ No. 1158/10-Ա

Չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Նաիրա Ավանեսյանս քննարկելով <<Գեվալ Տել>> ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների <<Գեվալ Տել>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08416842 հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ ք.Գավառ Հացառատ թաղամաս, պետ. գրանցման համարը՝ 25.110.01106) նկատմամբ 12.06.2019թ-ին հարուցված վարչական վարույթի շրջանակներում գանձման ենթակա պարտավորությունը կազմում է 647.428 դրամ, որից ապառք՝ 412.100 դրամ, տույժ՝ 235.328 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ չկատարված պարտավորությունը գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ2/0143/05/10 վարչական գործով 16.07.2010թ-ին վճիռ է կայացրել <<Գեվալ Տել>> ՍՊԸ-ից 523.700 դրամ գանձելու մասին, որի մեջ ներառված է եղել ավելացված արժեքի հարկ՝ 178.600 դրամ (ապառք՝ 148.900 դրամ, տույժ՝ 29.700 դրամ), եկամտահարկ՝ 13.900 դրամ (ապառք՝ 10.100 դրամ, տույժ՝ 3.800 դրամ), շահութահարկ՝ 16.900 դրամ (ապառք՝ 15.400 դրամ, տույժ՝ 1.500 դրամ), պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 301.400 դրամ (ապառք՝ 212.800 դրամ, տույժ՝ 88.600 դրամ), պետական տուրք՝ 12.900 դրամ (տույժ՝ 12.900 դրամ) :

Մասնակի վճարումների արդյունքում վերը նշված որոշմամբ պարտքի մնացորդը կազմում է 491.100 դրամ, որից ավելացված արժեքի հարկ՝ 160.900 դրամ (ապառք՝ 131.200 դրամ, տույժ՝ 29.700 դրամ), եկամտահարկ՝ 13.900 դրամ (ապառք՝ 10.100 դրամ, տույժ՝ 3.800 դրամ), շահութահարկ՝ 14.900 դրամ (ապառք՝ 13.400 դրամ, տույժ՝ 1.500 դրամ), պարտադիր սոցիալական ապահովության վճար՝ 301.400 դրամ (ապառք՝ 212.800 դրամ, տույժ՝ 88.600 դրամ) :

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 156.328 դրամ, որից՝

ավելացված արժեքի հարկի գծով պարտավորությունը կազմում է **51.823 դրամ**, որն ամբողջությամբ տույժի գումար է և առաջացել է իրավահարաբերության ծագման պահին գործող <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժերից.

եկամտահարկի գծով պարտավորությունը կազմում է **5.758 դրամ**, որից ապառք՝ 2.600 դրամ, տույժ՝ 3.158 դրամ,որն առաջացել է 2010 թվականի 2-րդ,3-րդ եռամսյակների եկամտահարկի հաշվարկներից և իրավահարաբերության ծագման պահին գործող <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժերից.

շահութահարկի գծով պարտավորությունը կազմում է **5.836 դրամ**, որն ամբողջությամբ տույժի գումար է և առաջացել է իրավահարաբերության ծագման պահին գործող <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով հաշվարկված տույժերից.

պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունը կազմում է **92.911 դրամ**, որից ապառք՝ 42.000 դրամ, տույժ՝ 50.911 դրամ, որն առաջացել է 2010 թվականի 2-րդ,3-րդ եռամսյակների սոցիալական ապահովության վճարների հաշվետվություններից և իրավահարաբերության ծագման պահին գործող <<Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով հաշվարկված տույժերից:

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկային եկամուտներն ու պետական տուրքերն են, որոնց հավաքագրման շնորհիվ են կատարվում նույն օրենքով նախատեսված հանրային, պաշտպանության, հասարակական, անվտանգության, դատական գործունեության և այլ ոլորտներում նախատեսված ծախսերը: Նշվածից ելնելով և հաշվի առնելով պարտավորությունների գանձման կարևորագույն հանրային նշանակությունը՝ **սույն որոշումը ենթակա է անհապաղ կատարման**:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 64-րդ, 66-րդ կետերով, 398-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, <<Հարկային

ծառայության մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. <<Գեվալ Տել>> ՍՊԸ-ից գանձել **156.328 դրամ** պարտավորության գումար:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն հարկ վճարողի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու կամ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ Ժ/Պ Ն.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ ԻՎ ՀԳ և ՊԿԱ բաժին,
գլխավոր մասնագետ Մ.Մաթևոսյան
հեռ.011-54-91-65

ՏԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի: